Լուիզիդոն ընդդեմ Թուրքիայի

(գանգատ թիվ՝ 15318/89)

Մեծ պալատի 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետ

Գույքից անարգել օգտվելու իրավունք

Հյուսիսային Կիպրոսում գույքից անարգել օգտվելու հնարավարություն չի տրվել և սեփականության իրավունքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն: *Արձանագրվել է խախտում:*

I. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *(RATIONE TEMPORIS)*

Թուրքիայի կառավարությունը *inter alia* պնդել է, որ դիմումատուի սեփականությունն օտարվել է Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության («ՀԿԹՀ») 1985 թվականի մայիսի 7-ի Սահմանադրության 159-րդ հոդվածի ուժով՝ մինչ Թուրքիայի կողմից 1990 թվականի հունվարի 22-ին Դատարանի իրավազորությունն ընդունելը:

Հիմք ընդունելով միջազգային փորձը, ինչպես նաև բազմաթիվ միջազգային կառույցների հանձնարարականներն առ այն, որ միջազգային հանրությունը «ՀԿԹՀ»-ը չի դիտարկում որպես միջազգային իրավունքով ճանաչված պետություն, ինչպես նաև այն, որ Կիպրոսի Հանրապետությունը շարունակում է մնալ Կիպրոսի միակ օրինական կառավարությունը՝ Դատարանը Կոնվենցիայի համաձայն չի կարող 1985 թվականի Սահմանադրության 159-րդ հոդվածը դիտարկել, որպես իրավաբանական ուժ ունեցող նորմ: Ուստի, Դատարանը չի կարող համարել, որ դիմումատուն զրկվել է իր սեփականության իրավունքից, և հետևաբար ենթադրալ խախտումները շարունակական բնույթ են կրում:

Եզրակացություն՝ առարկությունը մերժվել է՝ ձայների 11 կողմ և 6 դեմ հարաբերակցությամբ:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ

Ա. Վերագրելիության հարցը

Հյուսիսային Կիպրոսում թուրքական բանակի մեծաքանակ զորքի առկայությունը և վերջինիս ներգրավվածությունը ակտիվ գործողությունների մեջ, վկայում են այն մասին, որ թուրքական բանակն ունի արդյունավետ ընդհանուր վերահսկողություն *[effective overall control]* տվյալ տարածքի նկատմամբ: Սույն գործի հանգամանքներում Թուրքիան պատասխանատվություն է կրում «ՀԿԹՀ»-ն գործողությունների և վարած քաղաքականության համար: Ուստի, Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով դիմումատուին՝ իր գույքից անարգել օգտվելու հնարավարություն չընձեռնելը Թուրքիայի իրավազորության սահմաններում է և վերագրելի է Թուրքիային: Հետևաբար, անհրաժեշտություն չկա քննել Թուրքիայի՝ 1974 թվականի միջամտության օրինականության հարցը՝ պետության պատասխանատվության հարցը որոշելու համար:

Բ. Միջամտությունը սեփականության իրավունքին

Դիմումատուն պահպանել է հողի նկատմամբ սեփականության իրավունքը, սակայն 1974 թվականից սկսած չի կարողացել տնօրինել, օգտագործել և տիրապետել այն: Ուստի, գույքից անարգել օգտվելու հնարավորություն շարունակաբար չտրամադրելը համարվում է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի միջամտություն: Թուրքական կառավարությունը որևէ կերպ չի հիմնավորել այս միջամտությունը, *[հետևաբար]* Դատարանը գտել է, որ սեփականության իրավունքի նման միջամտությունը հիմնավոր չէ:

Եզրակացություն՝ արձանագրվել է խախտում՝ ձայների 11 կողմ և 6 դեմ հարաբերակցությամբ:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾ

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել, քանի որ խնդրո առարկա հողի վրա տուն կառուցված չի եղել:

Եզրակացություն՝ խախտում տեղի չի ունեցել (միաձայն):

IV.ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾ

Եզրակացություն՝ հարցը չի քննվել (միաձայն):